Ardshinbank

Տեղեկատվական թերթիկ՝ Advanced սակագնային փաթեթի շրջանակում տրամադրվող ծառայությունների վերաբերյալ

Հարգելի հաճախորդ,

Ձեզ տրամադրվել է ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ հաճախորդների սպասարկման Advanced սակագնային փաթեթը: Փաթեթում ներառված ծառայությունների սակագների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է Բանկի պաշտոնական կայքէջում: Հասանելի ծառայությունների վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ստորև:

1. Անհատական մենեջերի ծառայություն

Սույն փաթեթի շրջանակում Ձեզ տրամադրվում է անհատական մենեջերի ծառայությունից օգտվելու հնարավորություն, որը ենթադրում է աշխատանքային էլ. փոստով, Viber, WhatsApp, Telegram և այլ կապի միջոցով հաճախորդի սպասարկում, հեռավար պատվիրված գործարքների կատարում և այլն:

2. Բանկային հաշվի բացում, Mastercard Black Edition դեբետային քարտի տրամադրում, Ibanking ծառայության ակտիվացում

Բանկային հաշվի բացման, Mastercard Black Edition դեբետային քարտի ստացման և/կամ Ibanking ծառայության ակտիվացման համար՝ անհրաժեշտ է Բանկին ներկայացնել դիմում՝ chat-bot-ի կամ զանգի միջոցով դիմելով Ձեր անհատական մենեջերին կամ այցելելով Բանկի մոտակա մասնաճյուղ:

3. Գործարքների հեռավար պատվիրում և հաստատում Mobile Banking հավելվածով

Դուք կարող եք գրավոր՝ chat-bot-ի միջոցով կամ բանավոր՝ զանգի միջոցով դիմել Բանկ՝ Ձեր անհատական մենեջերին և պատվիրել գործարք: Անհատական մենեջերի կողմից գործարքը կատարվելուց հետո Ձեր Mobile հավելվածում կստանաք push notification՝ գործարքի մանրամասներով, որը Ձեր կողմից հաստատվելու դեպքում՝ գործարքը կկատարվի, իսկ մերժվելու դեպքում՝ կչեղարկվի և ընթացք չի ստանա:

4. Priority Pass քարտի տրամադրում և վերաթողարկում

Mastercard Black Edition դեբետային քարտին կից թողարկվում և տրամադրվում է Priority Pass քարտ, որն ապահովում է 2 անձի համար անվճար մուտք աշխարհի 100 երկրների օդանավակայաններում տեղակայված ավելի քան 600 VIP սրահներ:

5. Concierge ծառայություն

Սույն փաթեթի շրջանակում սպասարկվելու և Mastercard Black Edition դեբետային քարտ ստանալու դեպքում՝ Դուք հնարավորություն եք ստանում օգտվելու Concierge ծառայությունից (ռեստորանների ամրագրում, հյուրընկալություն և միջոցառումների տոմսերի ամրագրում):
Ծառայությունից օգտվելու համար անհրաժեշտ կապի միջոցները ներկայացվում են ստորև՝

- Chat-bot-ի հղում՝ https://app.konsierge.com/lite.html

- հեռ.՝ +374 41 121 362

- էլ. փոստ՝ info@konsierge.com